ՀԱՄԲԱՒԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԼՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՄԲԱՒԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ լրագիրը հրատարակւում է իւրաքանչիւր ամսի 10 ին և 20 ին. տարեկան գինը ՃՌԱՔԱՂԻ հետ 'ի միասին է 5 ռուբ. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ռուբ. արծ. կանխիկ վճարելի:

ՅՈՒԼԻՍԻ 20 — Հ. 24 — 1862 ԱՄԻ

Այս Համարովս վերջանում է Համբաւաբերի առաջին տարին:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՑ, ԱՆՑԻՑ, ՕՐԱԳՐԱՑ ԵՒ ԼՐԱԳՐԱՑ

Մոսկուա. Յունիսի 13.

Փեթերպուրկում տպագրուած ռուսերէն «Հիւսիսային Մեղու» անուն լրագրի 146 երորդ համարին մէջ, որ Յունիսի 2 էն, կարդացած էինք մի նամակ Սամսունէն գրուած, և որի մէջ նկարագրւում է մի ազգային անցք, որ պատահած է նոյն Սամսունի մէջ՝ Բ.ին անուն փրոթեսթանդը թաղելու ժամանակ. բայց մեք մինչև ցայսօր չթարգմանեցաք այդ լուրը կասկածելով նորա ստուգութեանը ըստ ամենայն մասանց. վասն որոյ լաւ համարեցաք սպասել մինչև որ աւելի ճիշդ տեղեկութիւնք ստանանք յայդ մասին, և այսպէս առնելով, ճշմարիտը ասենք՝ չսխալուեցաք, որովհետև Մասիս լրագիրն (թիւ 533) պատմում է այդ անցքը բոլորովին այլ կերպիւ, որ աւելի հաւանական է թուում մեզ: Այս է Մասիսի պատմածն.

«Ասկէց երկու տարիի չափ առաջ Խոբէնէ Գաբուի գերեզմանատան մէջ, ասում է Մասիսը, բողոքական հայու մը թաղման պատճառաւ անցած անցքերը դեռ մեկուն մտքէն ելած չեն:

«Ազգը տեսնելով այն ժամանակը որ գերեզմանատանց մասին ուրիշ քրիստոնեայ հասարակութեանց ցուցըցած մարդասիրութիւնը կամ անխտրութիւնը իր սեփականութեանց իրաւունքը վտանգի մէջ կը ձգէ և տարապարտ վէճերու, գըժտութեանց, խռովութեանց, ազգիս անունը բամբասուելու, և շատ անգամ ալ վնասուց * պատճառ կըլլայ, ընդհանուր ժողով որոշեց որ այս վընասակար անխտրութեան վերջ դրուի: Կայսերական բարեխնամ կառավարութիւնն ալ ազգիս խնդրանացը համեմատ հրաման ըրաւ, որ այսուհետև բողոքական հայք ամեն տեղ իրենց համար յատուկ գերեզմանատուն ունենան և իրենց մեռեալներն ալ ևս Հայոց գերեզմանատունը չթաղեն: Հետևաբար թէ մայրաքաղաքիս մէջ և թէ գաւառները բողոքական Հայոց գերեզմանատուն ըլլալու համար զատ երկիրներ նշանակուեցան: Այս որոշումն ու տնօրէնութիւնը մայրաքաղաքիս ամեն Հայ և օտարազգի լրագրաց մէջ հրատարակուելով և ամեն տեղ 'ի գործ դրուելով՝ կը կարծէինք իրաւամբ թէ այսուհետև վերյիշեալ վնասաբեր վէճերուն դռները գոցուած են ազգիս համար: Դըժբաղդաբար, սըխալեր ենք:

«Որո՞ւ մտքէն կանցնի: Սամսունի մէջ Զաքարեան Սարգիս աղա անունով մեծ և գերազօր իշխան մը ունինք եղեր, որուն առջև ընդհանուր ազգին իրաւունքը, շահը, պատիւը, օրէնքը, կանոնը և մինչև կրօնական զգացումը տղայական խաղալիկներու պէս ոչինչ բաներ են: Այս անձը Սամսունի մէջ վախճանող օտարազգի բողոքականի մը մարմինը Հայոց եկեղեցւոյն գաւթին մէջ թաղելու կելնէ լիով իշխանութեամբ, բայց ժողովուրդը կընդդիմանայ և չթողուր:

«Ահաւասիկ այս զարմանալի անցքին վրայ մեզի գրուած տեղեկութիւնները:

«Սամսունի Գաղղիական շոգենաւուց գործակատար և Շվէտի ու Նորվէկիայի տէրութեան փոխ հիւպատոս Զուիցցերցի բողոքական մը մօսիւ Քիւն անուն՝ Զատկին երրորդ օրը վախճանելով, որչափ որ հոն բողոքականաց յատկացեալ գերեզմանատուն մը կայ ալ նէ, այսու ամենայնիւ տեղւոյն անգղիական հիւպատոսի թարգման Տրապիզոնցի Զաքարեան Սարգիս աղան կուզէ որ վախճանեալը Հայոց եկեղեցւոյն մէջ թաղել տայ: Ասոր համար գաւ-

---

* Վկայ են Իւսկիւդարի, Սերաստիոյ Թէքիրտաղի, և այլն գերեզմանատանց վրայ ծագած վէճերը, որոնք ազգին վնասովը վերջացած են: Ծանօթ. Մասիսի.

ԹԵՐԹԻԿ

ՊՐԱՊԱՆԹԵԱՆ ԴՔՍՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(Շարունակութիւն, տես Հ. 21)

ԳԼ.

Ինչու Պրապանթեան դքսութեան ծագումն պէտք է փնտռել Կեսարի ժամանակներէն.

Երբ որ Սալվիուսը վերադարձաւ բանակ, տուաւ արձանը Հօրեղբօր: Կեսարի երեսաց վերայ նշմարւում էր մեծ վրդովութիւն, բայց այն պատճառուած էր առաւել 'ի գթոյ, քան թէ 'ի բարկութենէ:

— Ի՞նչպէս անցաւ քո ձեռքդ այս Ափրոդիտէի արձանն, հարցուց նա:

Պատանին հաւատարի գոլով թէ առանց երկիւղի կարող է համարձակաբար խօսիլ, պատմեց նորան անցքը, որի դիւցազնն էր ինքն:

— Վաղուեան օրը դու կտանես ինձ, շարունակեց Կեսարը, յայն խորհրդաւոր ամբոցը: Հարկ է որ մենք մենակ երթամք, որ Գերմանայն չվախենայ: Ողորմելի կինն, որքան վիշտք կրած է: Ափսոս որ ես չկարողացայ ազատել նորա ամուսինը, որ դէմ էր դնում այն տեղ՝ ուր չէր կարելի դէմ դնել, 'ի միտ չբերելով՝ թէ ես Կեսարն եմ, թէ ես նորա եղբայրն եմ: Ես փափագում եմ տեսանել նորան: Նա իմ հօր դուստրն է; նա իմ մանկութեան ընկերն է:

Սվանը՝ յետ գնալոյ իւր քրոջորդւոյն, մեծ անհանգստութեան մէջ էր: Պիտի կարողանա՞յ արդեօք նա հաշտութիւն առնել Կեսարի հետ: Մի անզգուշութիւն չէ՞ գործած արդեօք յայտնելով իւր բնակութեան տեղը: Նա իւր համար ամենևին չէր հոգում. այլ՝ նորա բոլոր հոգն տղայոց համար էր: Եւ ահա յանկարծ Օքթավիուս վազելով եկաւ նորա մօտ և փարատեց նորա այնպիսի մտածութիւնքը՝ ասելով.

— Մա՛յր, նայիր ի՞նչ գեղեցիկ նաւակ է գալիս մեր մօտ:

Երբ որ Սվանը լսեց այս՝ զգաց թէ իւրեան զօրութիւնն պակասում է. բայց յօգնութիւն կանչելով ամենազօր Ափրոդիտէն՝ գնաց դէպ 'ի ամրոցի առջևումը եղած հովիտը:

Այն եկաւորաց մատաղագոյնն էր Սալվիուս. իսկ միւսն երկայն հասակաւ, սևաւ ցոլացայտ և թափանցիկ աչքերով, դեղին երեսով և բարձր ճակատով, որի վերայ մըտածութեան նշան էր երևում... էր Կեսար:

— Գերմանայ քոյր իմ, աղաղակեց նա կարկառելով առ նա իւր ձեռքը:

թին մէջ գերեզման մը փորել կուտայ և քահանային ու վարժապետին ալ հրաման կընէ որ դպիր տղայքն հետերնին առած, զգեստաւորեալ, խաչերով և ուրիշ ամենայն հոգևոր զարդարանքներով վախճանելոյն առջև իյնան և կարդալով եկեղեցին տանին թաղեն։

«Քահանայն ալ՝ ինչպէս կերևի, ուրիշ շատ տեղեր տեսնուածին պէս՝ իշխանին անդառնալի կամացը դէմ կենալու չհամարձակելով, կուրաբար կը հնազանդի։

«Ժողովուրդն իմանալով որ վախճանեալ բողոքականը եկեղեցւոյն բակը պիտի թաղուի, որ սովորաբար եկեղեցականները միայն թաղել սովորութիւն է, իրար կանցնին և քանի մի մարդ կը ղրկեն Սարգիս աղային աղաչելու որ մեռեալը եկեղեցւոյն մէջ թաղել տալու խորհուրդէն ետ կենայ, կամ գոնէ եկեղեցիէն դուրս աշխարհականաց յատուկ եղած գերեզմանատանը մէջ թաղել տայ։ Սարգիս աղան պատգամաւորներուն աղաչանացը սաստիւ և սպառնալեօք կը պատասխանէ, և «Ո՞վ էն այդ իմ կամքիս հակառակող...ները» ըսելով կը վռնտէ։ Ասկից ժողովուրդն աւելի կը գրգռի, և ամեն բան աչքն առնելով եկեղեցւոյն մէջ թաղումն արգիլելու կը պատրաստուի։

«Սամսունի մաքսատան գործակալ Ասլանեան յարգի Յօհան աղան տեսնելով որ գործը պիտի գէշնայ, կելլէ անձամբ Սարգիս աղային կերթայ և բարեկամաբար գլուխը խելք դնելու կաշխատի, բայց ՚ի զուր։ Սարգիս աղային կամքը ետ չէր կըրնար դառնալ։ Նոյն միջոցին Հայերը Սամսունի կառավարիչ վսեմ. Քեամիլ փաշային աղերսագիր տուած ըլլալով, փաշան խռովութեան առաջքն առնելու համար իր պահապան զինուորաց գլուխ Հիւսէին էֆէնտին Սարգիս աղային կը ղրկէ և ազգին կամքն ու դիտաւորութիւնը իմացընելով կառաջարկէ որ անկարգութիւն մը չպատահելու համար վախճանեալը բողոքականաց յատկացեալ գերեզմանատունը թաղուի։ Սարգիս աղան մերժողական պատասխան կուտայ։

«Նոր վրայ փաշան՝ ժողովին անդամները հետըն առած՝ բազմաթիւ զինուորներով Հայոց եկեղեցին կերթայ և տեսնելով ժողովրդեան անդրդուելի ընդդիմութիւնը, բացուած գերեզմանը գոցել կուտայ։

«Քանի մի վայրկեան ետքը, մեռեալը՝ բուն հայումը յատուկ եղած եկեղեցական հանգիսիւ, քահանային ու դպրաց երգաձայնութիւններովը և Ռուսիոյ ու Աւստրիոյ հիւպատոսաց և ուրիշ այլ և այլ ազգէ բազմաթիւ անձանց ուղեկցութեամբ դէպ ՚ի Հայոց եկեղեցին կառաջնորդուի։ Հայերը կ՚սկսին աղաղակ վերցընել։ Վսեմ. փաշան նորէն մարդ կը ղրկէ Սարգիս աղային և ելլելիք գէշութիւնը իմացընելով կը խնդրէ որ եկեղեցին չբերուի։ Սարգիս աղան դարձեալ մտիկ չըներ և կուզէ մեռեալը ներս մտցընել։ Աղմուկը կը մեծնայ, Վսեմ. փաշան մէջ կը մտնէ, և վերջապէս Սարգիս աղան իր ձեռնարկութեան անհնարութեանը համոզուելով՝ ժողովրդեան դէմ բիւր նզովք ու հայհոյանք կը ժայթքէ, և յուղարկաւորութեան ճամբան դարձընելով՝ կը տանի իր տանը առջևի պարտէզին մէջ ամփոփել կուտայ մեռեալը։ Թաղման աղօթքներն ալ վարժապետը կը կարդայ։

«Այսպէս կը վերջանայ փառասէր ու խոլոտ մարդու մը յիմար անձնահաճութենէն ծագած վէճը, և մեծ ու թերևս արիւնահեղ խռովութեան մը առաջքը կառնուի վսեմ. փաշային խոհական և ազդու ջանից շնորհիւը՝ որին ազգովին շնորհակալ ըլլալու պարտական ենք։

«Այս ցաւալի անցքը Սամսունէն մայրաքաղաքիս Քուրիէ տ՚Օրիան լրագրին գրուած նամակի մը մէջ բոլորովին ուրիշ գոյն առած է*։ Ազգայնոց ընդդիմութիւնը իբրև կրօնական մոլեռանդութիւն, և վսեմ. փաշային վարմունքն ալ վախճանելոյն և անոր յուղարկաւոր եղող Եւրոպացւոց կրօնին իբրև թշնամանք ցոյց տրուած է։ Ուրեմն պէտք էր որ Հայերը մոլեռանդ չհամարուելու համար բողոքականը իրենց եկեղեցւոյն մէջ թաղել տային, և վսեմ. փաշան ՚ի պատիւ Սարգիս աղային և Եւրոպացի յուղարկաւորաց, Հայերուն բռնութիւն ընէր որ օտարազգի ու օտարական մեռեալ մը մեր եկեղեցւոյն մէջ թաղել տար։ Բայց երբ, ու՞ր և ո՞ր ազգի մէջ լսուեր կամ տեսնուեր է այսպիսի կրօնական թոյլատրութեան օրինակ մը։ Եւրոպայի մէջ կա՞յ անանկ ազատամիտ ազգ մը, որ կրօնական թոյլտուութիւնը մինչև իր եկեղեցւոյն մէջ օտարակրօններ թաղելու հասցընէ։ Ասանկ անտեղի պահանջմունք մը ստուգիւ ամեն ողջամիտ մարդոց ծիծաղը կը շարժէ։ Բայց մենք պէտք է ցաւինք. վասն զի պատճառ տուողը մեր ազգակիցն է, որուն դժբաղդաբար եկեղեցականներ ալ գործակից գտնուած են. անարժա՜ն եկեղեցականներ, որոնք անխիղճ, գոռոզ, լունասէր ու ազգատեաց աշխարհականի մը կամքին ստրկաբար հնազանդելով, իրենց ազգին և եկեղեցւոյն իրաւունքն ու պատիւն այսպէս անարգել տալու գործիք կըլլան»։

Հիւսիսային Մեղուի թղթակիցը բաց յայտմանէ, որ այլ կերպիւ պատմում է յիշեալ անցքը, յաւելացնում է իւր նամակի մէջ և այս, իբր թէ՝ նոյն Սարգիս աղան (որին նա Իսքէֆեան է անուանում), անցեալ տարի մի մեծ գործ է կատարած Հայոց ազգի համար, այն է՝ չէ թողած Հայերին ընդունել զկաթոլիկութիւն։ Այս լուրս ստուգութիւնը կամ ճշմարտութիւնը որոշել չենք կարող, ուստի թողում ենք այդ՝ Մասիս լրագրի քննութեանը, որում գուցէ աւելի ճիշդ տեղեկութիւնք հասած լինէին յայսմ մասին։

---

* Որպէս և Հիւսիսային Մեղուի թղթակցին նամակին մէջ, ուր այդ անցքի մէջ՝ յանցաւոր համարուում է Քեամիլ փաշան, որ իբր թէ կամեցած է հասանել այդու՝ իւր մի գաղտնի նպատակին։ — Խմբագրիչ Համբաւաբերի։

Սվանը անկարագրելի ուրախական ձայնիւ անկաւ իւր եղբօր գրկի վերայ, յետոյ ցոյց տուաւ նորան իւր զաւակունքը առանց բառ մի արտաբերելոյ։

— Ես նոցա հայր լինելու եմ, պատասխանատուաւ քաղցրութեամբ Կեսար, որ հասկացած էր ողորմելի այրի կնոջ միտքը։

Այսպէս շատացուցանելով առաջին կրից յափշտակութիւնը, Կեսարը դարձաւ Սալվիուսին.

— Ընկեր, ասաց, յառաջ քան զամենայն շնորհակալ եմ մեծ չաստուածուհւոյն, որ մեր լինելոց պահպանիչն է, և ապա առաւել քեզ եմ պարտական։ Այս օրս կարող եմ ես կոչել ամենաբաղդաւոր օր իմ կենաց, և ցանկալի է ինձ այժմ ես ապացուցանել քեզ իմ շնորհակալութիւն։ Խնդրէ ինձանից ինչ որ կամենաս, և եթէ իմ կարողութիւնս թոյլատրէ կամքդ կատարելու, այս րոպէիս ես կ՚տամ։

Սվանը մեղմ ձայնիւ հաստատեց եղբօր ասածը։

— Թէ որ այնպէս է, ասաց պատանին առաւել համարձակութիւն ստանալով, ես համարձակուում եմ խնդրել վարձատրութիւն, որին թէև սակաւ եմ արժանի, բայց ժամանակաւ յոյս ունիմ արժանանալու։

— Որպիսի վարձատրութիւն է այն, հարցոյց Կեսար։

— Քո քրոջ դստեր ձեռքն է, Կեսար, պատասխանեց Սալվիուս շիկնելով։

— Կեսար ժպտեցաւ։

— Այդ խնդիրքդ ես կարող չեմ կատարելու, առ նա դարձիր, ասաց՝ ցուցանելով զքոյրը։

— Մայրն, ասաց յայնժամ Գերմանայն, չունի իրաւունք մերժել այն մարդուն, որ դարձուց իւր զաւակաց՝ նոցա հայրը։ Եւ Սալվիուս եղև բաղդաւոր փեսայ՝ իւր ազգական մատաղահաս Սվանին։

Հարսանիքն կատարուեցաւ, յաւելացընում է հին տարեգիրն, ըստ հին սովորութեան, մեծաւ հանդիսիւ, Ափրոդիտէ չաստուածուհւոյն տաճարի մէջ, Լեվինում, Կեսարի առաջև, որ ճոխացոյց այն տաճարը ընծայաբերութեամբ, և բաշխեց քրոջ դստեր փոխանակ օժտի բոլոր շրջակայ երկիրը, դքսուհւոյն անունը նորան տալով։

Սալվիուսն անուանեցաւ Պրապանդ, որ Յունարէն նշանակէ Միջնորդ, քոյրը եղբօր հետ հաշտեցուցանելոյ համար։ Այս պատճառաւ երկիրն ես, ուր նա բնակեցաւ, յետ ժամանակաց Պրապանդիա անուանեցաւ։

Ահա այսպէս, ըստ Յոհան լը Մէր տը Պելժի ասածին, ծագեցաւ Պրապանդեան դքսութիւնն, և վերաբերուում է Կեսարի ժամանակներին։

ՎԵՐՋ։

ՀԱՄԲԱՒՆԵՐ

ՏԵՐՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ, յետ վերաքննելոյ նախարարաց խորհրդարանում, Յունիսի 12 ին Բարձրագոյնս հրամայել բարեհաճեցաւ ընդունել ՚ի հըրահանգ ՚ի մասին գրաքննութեան հետևեալ ժամանակաւոր կանոնները, մինչև ցվերաքննութիւն բոլոր կարգադրութեանց վասն գործոց գրատպութեան։

Ա. Առ հասարակ բոլոր տպագրեալ աշխատասիրութեանց մէջ թոյլ չտալ եղծանել պարտուպատշաճ յարգանքն առ վարդապետութիւն և առ ծէսս քրիստոնէական դաւանութեանց. պահպանել անմերձենալի ծայրագոյն իշխանութիւնը և նորա սեպհականութիւնքը, յարգը առ անձինս թագաւորող տան, անխախտութիւնը հիմնաւոր օրինաց, ազգային (ժողովրդական) բարոյականութիւնը՝, պատիւը և տնային կենցաղը իւրաքանչիւր մարդոյ:

Բ. Թոյլ չտալ տպագրել այնպիսի շարադրութիւնք և յօդուածք, որք արտայայտեն ընկերավարական (соціализма) և հասարակական (коммунизма) վարչութեանց վնասակար ուսմունքը, որոց նպատակն է շարժել կամ կործանել արդի կարգը և մուծանել անիշխանութիւնը:

Գ. Առ մեզ եղած կանոնաց անկատարութիւնը վննող շարադրութիւնքը քննելու ժամանակ, թոյլ տալ տպագրել միայն մասնական ուսումնական խորհրդածութիւնքը, որք գրուած են իւր առարկային պատշաճ եղանակաւ, և որք վերաբերին ևս այնպիսի կարգադրութեանց, որոց թերութիւնքը երևեցած են արդէն փորձիւ:

Դ. Կառավարութեան թերութեանց և չարաչար կիրառութեան վերայ գրեալ խորհրդածութեանց մէջ՝ թոյլ չտալ տպագրել անձանց անունքը, և տեղեաց և կառավարութեանց սեպհական կոչմունքը:

Ե. Նախագրեալ երկու յօդուածոց մէջ նշանակեալ խորհրդածութիւնքը՝ թոյլ տալ միայն այնպիսի գրեանց մէջ՝ որք պարունակեն իւրեանց մէջ ոչ պակաս քան զտասն տպագրեալ թերթ, և այն օրագրաց մէջ՝ որոց տարեկան գիներն՝ ուղարկելով եօթն ռուբլիէն պակաս չեն:

Զ. Յանձնուում է նախարարաց ներքին գործոց և ազգային լուսաւորութեան, ըստ իւրեանց փոխադարձ համաձայնութեան՝ որ և լիցի օրագրի վնասակար ընթացքը տեսանելու ժամանակ՝ համեմատել նորան 'ի կարգ այնպիսի օրագրաց, որոց չէ թոյլատրուում տպել 3րդ և 4րդ յօդուածոց մէջ նշանակեալ խորհրդածութիւնքը, և դադարեցուցանել իւրաքանչիւր օրագիրը ոչ աւելի քան ութ ամիս ժամանակով:

Է. Թոյլ չտալ տպագրելու ա, այնպիսի յօդուածքը՝ որոց մէջ գրգռուում է թշնամութիւն և ատելութիւն միոյ մարդկային դասակարգի առ միւսն, և բ, այնպիսի յօդուածքը՝ որոց մէջ պարունակին վիրաւորիչ ծաղրաբանութիւնք ամբողջ մարդկային դասակարգաց կամ տէրութեան և հասարակական ծառայութեան պաշտամանց վերայ:

Ը. Թոյլ չտալ ըստ լոյս միայն հրատարակել այնպիսի կարգադրութիւնքը՝ որք թէպէտ թէ պիտի լինին կառավարութեան կողմանէ, մինչ դեռ նոքա չեն հրատարակուած օրինաւոր կերպիւ:

Թ. Կառավարութեան անձանց ստորագրութեամբ յօդուածքը թոյլ տալ տպագրել միայն յետ հաստատապէս իմանալոյ՝ թէ այդ յօդուածքն իսկապէս ուղարկուած են նոցանից:

Ժ. 'Ի մասին քաղաքական յօդուածոց և լոյս պահել ընդհանուր կանոնը վասն պահպանելոյ թագաւորող օտար թագաւորաց և նոցա գերդաստանի անդամոց՝ պատիւը և տնային կենցաղը յանիրգանաց տպագրեալ բանիւ, և վասն պահելոյ պատշաճական կերպը այլ տէրութեանց գործքերի նկարագրութեան ժամանակ:

ԺԱ. Իւրաքանչիւր օրագրի խմբագրատունը՝ գրաքննութեան ժողովին՝ որ և լիցէ յօդուածը ներկայացնելու ժամանակ, պարտական է իմանալ՝ ով է իսկապէս այն յօդուածի հեղինակն, որպէս զի 'ի պահանջել դատաստանական տեղեաց և նախարարութեանց ներքին գործոց և ազգային լուսաւորութեան՝ կարողանայ նա ցեկուցանել:

ԺԲ. Բաց 'ի կանոնաց, որք այս տեղ նշանակուեցան, գրաքննիչքն պարտական են առաջի ունենալ և 'ի ներքոյ գրեալ առանձին խրատները այնպիսի յօդուածներ քննելու ժամանակ, որք վերաբերին զինուորական, դատաստանական, արքունի ելեմտից, և ներքին գործոց նախարարութեան առարկայից մասին (յաւելուած Ա.):

ԺԳ. Յետ այսորիկ խափանուած համարել 1828 թուականէն մինչև 'ի 1 Յունուարի 1862 ամի հաստատեալ սահմանադրութիւնքը և կարգադրութիւնքը 'ի մասին գրաքննութեան, բաց 'ի ընդ սմին եդեալ ցուցակի մէջ յիշատակուածներից (յաւելուած Բ.):

— ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ Յունիսի 10 ին Բարձրագոյնս բարեհաճեցաւ յանձնել Ստատս-Սէքրէթար Կոլովնինին յայսմ իսկ աշնան բանալ Փեթերբուրգեան համալսարանի Ֆիզիքօ-Մաթեմաթիքական բաժինը. իսկ միւս բաժինքը՝ բանալ յաշնան առաջակայ ամի 'ի վերայ հիմանց համալսարանական նոր կանոնաց:

— ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ, 'ի պատճառս առ վընասակարն բերման կամ ընթացից Կիւրակէական վարժարանաց և ժողովրդական ընթերցարանաց՝ Բարձրագոյնս հրամայել բարեհաճեցաւ՝ անյապաղ վերացնել Կիւրակէական վարժարանաց հիմնարկութեան կանոնները, և մինչև ցկարգաւորելն յիշեալ վարժարանաց 'ի վերայ նոր հիմանց, փակել այն ամենայն Կիւրակէական վարժարանները և ընթերցարանները որք այժմս կան:

ԱԶԳԱՅԻՆ

Բ.

Ճառ ասացեալ առաջի Աղայ Ստեփաննոսի Սամուէլեան:

[illegible]:

Փըրկաւէտ է հանդէս՝ յոր բերիմ ես այսօր,
Փըրկողին՝ գոհութեան նըւագել զալէլու:
Լըռեսցեն համօրէն Մուսայից ձայնք երգոց,
Երգեսցեն Զըւարթունք զփըրկութիւն մեր հոգւոյ:
Յայսմ աւուր յարեաւ Տէրն կուսական 'ի վիմէն,
Վերածեալ զազգ մարդկան՝ կորըստեան 'ի վըհէն:
ԶԱդամայ զկորուսեալ փառս կենացն երջանիկ
Փառանգեն համազդք, նորուն զարմ և որդիք:
Որոյ վասն և մեզ իսկ, բազմերախտ մեր Տեառն՝
Որ հոգայ ըզմեր պէտս ըստ կարգին վայելուչ,
Արժան է ցընծութեամբ աւետել զայս հանդէս
Որով նոր գտանին կեանս մահացեալքն հոգեպէս:
Օ՛ն ապա և Դուք, Տէր, թոյլ տուք մեզ հայրաբար
Զառ փըրկիչն յարուցեալ մաղթանացն ըզբարբառ՝
Կըրկնել առ վերըստին յըղձից մեր հոգեւոյն՝
'Ի նըշան գոհութեան որդեկաց յոր ըղձէնք:
„Հանգո՛ Տէր ըզհոգի ծառայիդ Գրիգորի,
Որ ըզմեզ խընամէր յայս ուսման տաճարի,
Պահեա՛ Տէր ըզնորայն բարեպաշտ գերդաստան
'Ի չարին յարկածից անսասան յաւիտեան":
„Կեցո՛ Տէր և զայժմեանս Պատկանուն խնամակալ,
Ընդ աջոյդ հովանեաւ ըզնա միշտ պահպանեալ":

Շարադրեաց և ասաց 18 Ապրիլի
աւագ աշակերտ վերին դասատան
ժողովրդական ուսումնարանին Վաղարշապատու

[illegible] Նիկողայոսեան Մուշեղեանց:

Գ.

Ճառ ասացեալ առաջի Աղայ Ստեփաննոսի Սամուէլեան:

[illegible].

Օ՜ի՛նչ այդ հոգենորոգ զուարթութիւն, որ այսօր 'ի դէմս Ձեր ամենեցուն տեսանի, ո՛ մանկունք նորոյս Սիոնի. ո՞ւր, յո՞ր վայր հրաւիրեալ էք դուք. յՆորուսաղէմ արդեօք՝ 'ի հուչակել ովսաննայիւք ընդ մանկանցն Եբրայեցւոց զերկնաւոր Թագաւորին գգալուստ. 'ի գերեզմա՞նն Յարուցելոյն. այո՛ 'ի գերեզման անդր, յորմէ անձառելին քարոզի մեզ ուրախութիւն ընդ ձեռն խնկաբերիցն երջանիկ կանանց: 'Ի գերեզմանն, զորով պարառեալ լուսափայլ զուարթնոց՝ զկենսաձիրն հրաշափառ յարութիւն Փրկագործողին զմեզ Քրիստոսի Աստուծոյ աւետաբանեն ասելով «Զէ՝ աստ. յարեաւ: Օ՜ մեծ զայս ուրախութիւն 'ի սերկեանս աւուր շընորհաւորեն միմեանց ընդհանուր ազգք հաւատացելոց: Օ՜նոյն և մեք փութամք շընորհաւորել Ձեզ, ո՛ բարերար Տէր մեր. քանզի գիտեմք իսկ հաստուցանել որում զպատիւ՝ զպատիւն, ըստ առաքելական պատուիրանի: Գիտեմք՝ թէ, յումմէ եմք երախտաւորեալք 'ի մասին հոգևոր յառաջադիմութեան և լուսաւորութեան մտաց մերոց: Ցնծացէ՛ք ուրեմն և դուք յայս խնդալից բարբառ համախմբելոցս աստէն մատաղերամ մանկանց. և հաճեցարո՛ւք գգուշնաքեայս զայս նուէր բանի ընդունել քաղցրութեամբ 'ի նշանակ շնորհապարտ մեծարանաց մերոց առ Ձեզ: Եւ մեք ամենեքեան զաղօթս պաղատախառն առ նա ինքն մատուցեալ առ խնկելիշխանաբար յարուցեալն Աստուածամարդ, հայցեմք բազկատարած՝ զի 'ի միւսանգամ զաղանեան իւրում յարուցէ ընդ իւրոյն սիրելեաց 'ի ժառանգութիւն կենացն յաւիտենից՝ և զանջատեալն 'ի մէնջ մարմնով զնախկին բարերարն մեր՝ զԱղայ Գրիգոր Մաղենցեանց: Եւ Ձեզ հայրագութ խնամակալուդ մերում աւուրս յաւուրս յաւելցէ, հանդերձ ըղձալի բարեմասնութեամբք հոգւոյ և մարմնոյ՝ յուրախութիւն, 'ի մխիթարութիւն և 'ի պարծանս մեր ամենեցուն ամէն:

Շարադրեաց և ասաց 'ի տօնի յարութեան Քրիստոսի աւագ աշակերտ վերին դասատան ուսումնարանին Վաղարշապատու.

Վահան Գէորգեան Տէր Գրիգորեանց.

ՆԵՐՔԻՆ

ՓԵԹԵՐԲՈՒՐԳ (Նամակ մեր Թղթակցի 'ի 10 ին Յունուարի 1862 ամի). Առաջին նամակիս մէջ նկարագրուած աշխարհի հրդեհներից յետ, որք եղան այս տեղ, մեր ամենեցունց ուշը և աշխատանքը դարձաւ առ այն,

ԾԻԱՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ



Այժմեան աշակերտաց և մանկանց ամենասիրելի պարապմունքն:

որ օրով յառաջ, որպիսի և իցէ կերպիւ, օգնենք ողորմելի վիրաւորներին: Եւ առաջին օրինակն այսպիսի Աստուածահաճոյ գործոյ՝ ցոյց տուաւ մեզ Բարեպաշտ Կայսրն մեր իւր Օգոստափառ Ամուսնովն և սիրելի զաւակօքն: Վասն զի Թագաւոր Կայսրն նուիրեց յիւր սեփհական արդեանց 25 հազար ռուբ. արծ. իսկ Օգոստափառ Կայսրուհին՝ զաւակօքն հանդերձ, դարձեալ յիւր սեպհական արդեանց, 29 հազար ռուբ. արծաթ: Եւ բաց յայս նուիրաբերութեանց, Բարձրագոյն հրամանաւ՝ առանց օթևանի մնացածներին՝ Տէրութեան պատկանեալ տուների մէջ՝ ձրիաբար օթևանելու տեղեր տրուեցան, և այլ այսպիսի կարգադրութիւնք շատ եղան: Ժողովուրդն, կամ լաւ ևս ասել վաճառականներն, տեսանելով Ողորմած Կայսեր այսպիսի հոգացողութիւնքը և բարի բարի կարգադրութիւնքը 'ի մասին արմատախիլ առնելոյ հրդեհների պատճառքը, կամէին յայտնել իւրեանց լիակատար շնորհակալութիւնը, և սպասէին միայն բարեյաջող րոպէի. և նոյն ցանկալի րոպէին արժանացան ոչ անագան: Որովհետև Յունիսի 5 ին Ափրաքսին և Շչուքին անուանեալ վաճառանոցներում առևտուր առնողքն լսելով՝ թէ միւս օրն Թագաւոր Կայսրն և Օգոստափառ Կայսրուհին պիտի գան 'ի Ցարսքոյէ Սէլօյէ՝ ընտրեցին իւրեանց միջէն քանի մի պատուաւոր անձինք, և հացիւ ու աղով ընդ առաջ ուղարկեցին Նոցին Մեծութեանց, յայտնելու համար իւրեանց խորին շնորհակալութիւնը այն ամենայն հոգացողութեանց մասին, զորս Օգոստափառ Կայսրն բարեհաճեցաւ առնել նոցա համար: Այնպէս և եղաւ: Թագաւոր Կայսրն և Օգոստափառ Կայսրուհին բարեհաճեցան ընդունել նոցա երկաթուղւոյ իջևանում: Ընտրեալներէն ամենածերը 'ի ծունկս խոնարհելով մատոյց Նոցին Մեծութեանց հաց ու աղը. և Կայսրն դարձաւ առ նա այսպիսի բանիւք. «Վեր կաց ծերունի, շնորհակալ եմ ձեզանից: Ես ուրախ եմ, որ կարողացայ գտնել փոքր մի օգնել ձեզ, և յուսով եմ ապագայում և աւելին առնել ըստ հնարաւորութեան»: Եւ յեւանել Նոցին Մեծութեանց յերկաթուղւոյ իջևանէն, անհամար բազմութիւնն ողջունեց Նոցին Մեծութիւնքը բարձրաձայն Ուռայ:

Օգոստափառ Կայսրուհին երկաթուղւոյ իջևանէն գնաց ուղղակի 'ի Սենատսկիյ անուանեալ հրապարակը, և հանդարտիկ անցանելով վրանների առաջևէն, որոց մէջ այժմ առևտուր սկսած են առնել, անդադար կանգնում էր և ընդունում էր վաճառականներից այլ և այլ իրք, որոց համար և Նորին Մեծութիւնը առատապէս վարձատրում էր նոցա, և քաղցրութեամբ խօսում էր նոցա հետ: Մի աղքատ վաճառական ևս մատոյց մի պատկեր (սուրբի), որի համար ստացաւ նա Նորին Մեծութեան ձեռքից 25 ռուբ. արծ. որ նորա համար մեծ փող էր: Կառքը շրջապատող կանայքն իւրեանց սրտից ուրախութենէն լաց էին լինում... Անմոռանալի րոպէ... Եւ Օգոստափառ Կայսրուհին յետ կէս ժամի չափ այս տեղ մնալոյ, գնաց Լէյպ-կվարտիայի-Սթրէլքովոյ-պաթալիօնի Զինուորանոցը (քազարմին), ուր բնակութեան տեղեր տուին աղքատաց, և անդ՝ գնուած իրքը՝ բաշխեց աղքատաց:

Ահա այսպէս Յունիսի 6 ին անմոռանալի պիտի մնայ Փեթերպուրկի հասարակ ժողովրդի մտքում:

Մայրաքաղաքիս քաղաքական Խորհրդանոցն (Տումա) նուիրեց հրդեհէն վնասուածների համար հարիւր հազար ռուբ. արծաթ. Քօլլէժսքիյ Սովէտնիկ Վօրօնովն նուիրեց յիսուն հազար ռուբ. արծ., որոյ համար և արժանացաւ նա Բարձրագոյն շնորհակալութեան. ազնուականաց ժողովարանի անդամքն նուիրեցին երեք հազար ռուբ. արծ.: Այսպիսի նուիրաբերութիւնք և օգնութիւնք եղան նոյնպէս մայրաքաղաքիս Սրբազան Մետրապօլիտէն, Անգղիացւոց և Գաղղիացւոց դեսպաններէն, և յայլ բազում անհամար անձանց: Միով բանիւ, ամենայն ոք՝ որ օգնութիւն կարող է առնել՝ առնում է, և ոչ ոք չէ կամենում յետ մնալ:

Նախարարութեան ներքին գործոց բոլոր թղթերն համարեա թէ ազատուեցան:

«Кіевскій Телеграфъ» անուն լրագիրն հրատարակում է՝ թէ առևտուրն Քիևի մէջ առաւել և առաւել ծաղկում է. քաղաքն զարդարւում է նոր նոր խանութներով, որք իւրեանց առևտուրի ընդարձակութեամբն և մեծածախս շինութեամբքն, ստոր չեն մնար Փեթերփուրկի կամ Մոսքուայի խանութներից. բայց այսու ամենայնիւ, թանգութիւնն չէ վերանում այն տեղ:

— Վիլէնսկիյ Վեստնիկ լրագիրն ծանուցանում է՝ թէ Տէրութիւնը թոյլ տուաւ ուսուցանելու Քրաքովի վարժատան մէջ Լեհաց լեզուն: Նոյնպէս և Քրաքովեան համալսարանի մէջ բոլոր դասաւանդութիւնքն (բաց 'ի քանի մի առարկաներից) պիտի լինին Լեհաց լեզուաւ:

ԱՐՏԱՔԻՆ

Սատրիտէն Յունիսի 23 էն գրում են՝ թէ Սպանիոյ թագուհին ծնաւ դուստր, և որպէս ինքն, նոյնպէս և նորածին զաւակն առողջ են:

ԹԵԼԷԿՐԱՖԱԿԱՆ

Ա.

ՎԱՐՇԱՒ. Յունիսի 15 առաւօտեան ժամ 10. «Այսօր առաւօտեան ժամը 7½ ին, կէնէրալ-Ատիւթանդ կոմս Լիտէրսը հանքային ջրերում՝ որ Սաքսոնեան պարտիզի մէջ, վիրաւորուեցաւ ատրճանակով վզի ետևի կողմից, ներքին շրթունքի տակ: Վէրքն՝ բժշկաց կարծիքով վտանգաւոր չէ, հիւանդի ընդհանուր վիճակն՝ գոհացուցիչ է: Չարագործն դեռ յայտնի չէ»:

Բ.

ՎԱՐՇԱՒ. Յունիսի 22. երեկոյեան ժամ 11, րոպէ 15. Նորին Կայսերական Բարձրութիւնն՝ Փոխարքայն Լեհաց Թագաւորութեան՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ՝ ծանուցանէ. «Ժամը 9½ (երեկոյեան), թատրոնէն ելանելու և 'ի կառք նստելու ժամանակ, տեսայ ես մի մարդ, որ մօտենում էր ինձ որպէս թէ խնդիրքով. բայց յանկարծ ուղղեց նա իմ վերայ ատրճանակը և արձակեց: Աստուած փրկեց. գնդակն անցանելով փալթօյիս, սիւրթուքիս, շապկիս միջէն, և քերթելով միայն մարմինս անրակիս (ключица clavicola) մէջ՝ նոյն տեղում դադարեցաւ: Ես ըստ ամենայնի լաւ եմ. զգում եմ միայն թեթև ցաւ: Չարագործն նոյնժամայն բռնուեցաւ»:

Գ.

Յունիս 23 էն և 24 էն ստացուած թելէկրաֆական համբաւներից երևում է, թէ Նորին Կայսերական Բարձրութիւնն՝ Մեծ Իշխան ԿՈՍՏԱՆԴԻՆ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ՝ առողջանում է. վէրքի շուտ բժշկուելուն յոյս կայ: Իսկ կէնէրալ-Ատիւթանդ կոմս Լիտէրսը համարեա թէ անընդհատ հարհաւրում է վնասուած ծնօտի ցաւէն. հիւանդի զօրութիւնը յանկնութենէն պակասում է:

Դ.

ՎԱՐՇԱՒ. Յունիսի 25. «Նորին Բարձրութեան՝ Փոխարքայի՝ վէրքն փակւում է. մնում է ցաւն ոսկորի մէջ: — Կոմս Լիտէրսը հանդարտ անցուց գիշերը. առողջութեան ընդհանուր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ»:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՀԱՄԲԱՒԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ լրագիրն պիտի շարունակուի և յառաջակայ ՌՅԺԲ (1312) ազգային թուականի, սկսեալ Օգոստոս ամսից ներկայ ամի, մինչև ցՕգոստոս 1863 ամի, ԱՌԱՆՁԻՆ (առանց ձեռագրի)՝ հրատարակուելով ամիսը ոչ ԵՐԿՈՒ, այլ ԵՐԵՔ անգամ (այն է իւրաքանչիւր ամսի **1** ին, **10** ին և **20** ին), մի և նոյն ձևով, մի և նոյն բովանդակութեամբ և ուղղութեամբ, որպէս հրատարակուեցաւ ներկայ ՌՅԺԱ ազգային թուականիս մէջ: Տարեկան գինն նշանակուում է՝ **4** ռուբ. արծ. (որի մէջ 1 ռ. 50 կ. փոստի ծախքն է), կամ 16 գաղղիական Ֆրանք, ուղարկելով. և կէս տարուանը՝ **2** ռուբ. արծ. (որի մէջ 75 կ. փոստի ծախքն է), կամ 8 գաղղիական Ֆրանք՝ դարձեալ ուղարկելով: Փողն վճարուելու է կանխիկ: Ով որ փողը կանխիկ չկամենայ վճարել, թէև բաժանորդ ևս գրուած լինի, լրագիրս նորան չուղարկուիր:

ԽՄԲԱԳԻՐ Զ. ՄՍԵՐԵԱՆՑ

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 23-го Іюня 1862 года.

Москва, Типографія Лазаревскаго Института.